Հայաստանի Հանրապետություն
Լոռու մարզ
«ԼՈՌԻ-ՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ»ՓԲԸ

Republic of Armenia
Lori marz
"LORI WATER AND SEWERAGE" CJSC

ՀՀ, 2007 ք.Վանաձոր, Ն.Ստեփանյան 2ա Հեռ/ֆաքս՝ (+374 322) 4 82 00 էլ. փոստ՝ contact@loriwater. am Վեբ կայք՝ www.loriwater.am
2a N.Stepanyan St., 2007 Vanadzor, Armenia Tel/Fax: (+374 322) 4.82.00 E-mail:contact@loriwater. am Web page: www.loriwater.am

Ջ/Կ թիվ 14 - 1030

«11» 07 2014թ.

14.07.2014թ.

ՀՐԱՎԵՐ

«Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կարիքների համար՝ համակարգչային և պատճենահանման սարքավորումներ և օժանդակ նյութեր

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերել Գնումների աջակցման կենտրոնի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 4-րդհոդվածի 5-րդմասի 3-րդ կետով նախատեսված շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսվա ***համակարգչային և պատճենահանման սարքավորումներ և օժանդակ նյութեր:***

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «ՀՀՏԿՆՁՏՊԿ-ԼՋ-ՇՀԱՊՁԲ-11/8-14-1»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնելք.Վանաձոր, Նելսոն Ստեփանյան 2 ա հասցեով, մինչև2014թ. Հուլիսի 24-ը, ժամը՝ 12:00-ը: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Ա.Պողոսյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ում՝ ք. Վանաձոր, Նելսոն Ստեփանյան 2 ա, հասցեում, հուլիսի 24-ին, ժամը՝ 12:00-ին:Գնմանառարկա է հանդիսանում «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կարիքների համար՝ ***համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի*** *ձեռքբերումը:*

«Լոռի-ջրմուղկոյուղի»ՓԲԸ-ի կարիքների համար՝ ***համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի*** *մատակարարման (որը կազմված են՝14 չափաբաժնից) տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N 3 հավելվածում:*

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. Գնման ընթացակարգին մասնակցելու դիմում(Հավելված N 1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. Գնային առաջարկ (Հավելված N 2):Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկն ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

*Մասնակիցը հայտով ներկայացնում է առաջարկված ապրանքի ծագման երկիրը իսկ համարժեք՝ **համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի** դեպքում՝ ներկայացնում է համարժեք գնման առարկայի անվանումը և ծագման երկիրը:*

«Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-իէլեկտրոնային փոստի հասցեն է՝ myarpi@yandex.ru:

«Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ

Գլխավոր տնօրենի տեղակալ՝ Հ.Անտոնյան